Բիզնեսի վարման էթիկայի բաժին

ԲԻԶՆԵՍԻ ՎԱՐՈՒՄ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Անկախ գործընկերների Վարքագծի կանոնները մշակվել են Ձեր բիզնեսը և Herbalife բրենդը պաշտպանելու նպատակով, ուստի դրանց պահպանումը անհրաժեշտ է կայուն ու առողջ աճի և զարգացման համար: Գոյություն ունեն կանոններ, որոնց խախտումը կարող է առանձնակի լուրջ վնաս հասցնել Ընկերության և Անկախ գործընկերների գործունեությանը: Դրանցից են Միջազգային բիզնես վարելու և Արտահանման քաղաքականության կանոնները:

Մենք ձգտում ենք, որպեսզի յուրաքանչյուր Անկախ գործընկեր հետևի Վարքագծի կանոններին և այդ նպատակով ստեղծում ենք այնպիսի նյութեր, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ կանոնները: Այս փաստաթղթում ուրախ կլինենք Ձեր ուշադրությանը ներկայացնել Հարցեր և պատասխաններ, որոնք պարզաբանում են հետևյալ Կանոնների գործնական կողմերը.

- **Herbalife-ի բիզնեսը բաց երկրներում: Արտադրատեսակների ձեռքբերում անձնական օգտագործման նպատակով**
- **Herbalife-ի բիզնեսն այն երկրներում, որոնք պաշտոնապես հայտարարված չեն բաց**
- **Herbalife-ի բիզնեսի համար փակ տարածքներ**

Herbalife

Herbalife–ի բիզնեսը բաց երկրներում: Արտադրատեսակների ձեռքբերում անձնական օգտագործման նպատակով

1. Արդյո՞ք կարող եմ արտերկիր ուղևորության ժամանակ ձեռք բերել Herbalife-ի արտադրատեսակներ անձնական օգտագործման համար և բերել դրանք իմ բնակության երկիրը:
Այո, կարող եք: Այլ երկրներ ուղևորվող Անկախ գործընկերներին թույլատրվում է արտահանել արտադրատեսակների խելամիտ տեսականի, որը մեկ ամսվա ընթացքում չի գերազանցի Ծավալի 1000 միավորը: Արտադրատեսակները ձեռք են բերվում միայն անձնական օգտագործման կամ ընտանիքի անդամների համար:

Բացառություն. ԱՄՆ–ում արգելվում է արտադրատեսակների ձեռքբերումն անձնական օգտագործման համար (տե՛ս հարց 13):

2. Ի՞նչ է նշանակում արտադրատեսակների խելամիտ տեսականու ձեռքբերում:
Արտադրատեսակների խելամիտ տեսականին այն ծավալն է, որը կարող է օգտագործվել Ծավալի մեկ ամսվա ընթացքում մեկ անձի կամ ընտանիքի կողմից:

3. Ես գրանցված եմ Վրաստանում, սակայն ժամանակավորապես բնակվում եմ Իսպանիայում: Արդյո՞ք իմ վրա տարածվում է մեկ ամսվա ընթացքում 1000 միավորի սահմանաչափը:
Ոչ: Եթե ժամանակավորապես բնակվում եք այլ երկրում, ապա կարող եք ձեռք բերել արտադրատեսակների ծավալ, որը կգերազանցի մեկ ամսվա ընթացքում 1000 միավորը՝ անձնական օգտագործման համար կամ այդ երկրում հաճախորդներին վաճառելու համար: Ընկերությունը կարող է պահանջել ձեզնից այլ երկրում ժամանակավոր բնակության հաստատումը, որպեսզի բացառի ձեր գործընկերային գործունեության հետ կապված հետագա հարցերի առաջացումը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ որոշ երկրներում գոյություն ունի ծավալի տարեկան սահմանաչափ, որը կարող է տեղադրվել ռեզիդենտ չհամարվող Անկախ գործընկերոջ կողմից: Տեղեկատվությունը ճշտելու համար դիմեք Տեղեկատվական աջակցության տեղական բաժին:

4. Արդյո՞ք կարող եմ արտերկիր ուղևորության ժամանակ ձեռք բերել 1500 միավորի արտադրատեսակներ, եթե արձակուրդի ընթացքում նախատեսում են օգտագործել 500 միավորի, իսկ մնացյալ արտադրատեսակները բերել ինձ հետ տուն:
Այո, կարող եք: Այդ դեպքում Ընկերությունը կարող է պահանջել ձեզնից այլ երկրում ժամանակավոր բնակության հաստատումը (օրինակ՝ արտասահմանյան անձնագրի պատճենը, որտեղ կլինի նշում սահմանը հատելու մասին , ավիատոմսեր):

5. Արդյո՞ք կարող եմ արտերկիր ուղևորության ժամանակ ձեռք բերել 1000 միավորի արտադրատեսակներ և 200 միավորի Herbalife-ի հագուստ:
Այո, կարող եք: Սահմանաչափը չի տարածվում հագուստի և պրոմո–արտադրատեսակների պատվերի վրա (կրծքանշաններ, շեյքերներ, գրականություն և այլն):

6. Ես բնակվում եմ Լատվիայում և պլանավորում եմ մասնակցել Աստանայում կայանալիք միջոցառմանը՝ փոխելով ինքնաթիռը Մինսկում: Արդյո՞ք կարող եմ անձնական օգտագործման համար ձեռք բերել 1000 միավորի արտադրատեսակներ Մինսկում և 1000 միավորի Աստանայում, որպեսզի միջոցառումից հետո ինձ հետ բերեմ Լատվիա:
Ոչ, չեք կարող: Այլ երկրներ ուղևորվող Անկախ գործընկերներին թույլատրվում է արտահանել արտադրատեսակների խելամիտ տեսականի, որը մեկ ամսվա ընթացքում չի գերազանցի Ծավալի 1000 միավորը՝ անկախ այցելած երկրների քանակից:

7. Ես ապրում եմ Վրաստանում և հաճախ եմ մեկնում Ղազախստան՝ ընկերներիս և հաճախորդներիս այցելության: Արդյոք կարող եմ Ղազախստանում ձեռք բերել 2000 միավորի արտադրատեսակներ, եթե 1000 միավորը նախատեսում եմ Ղազախստանում վաճառել ընկերներիս և հաճախորդներիս, իսկ մնացյալ 1000 միավորը բերել ինձ հետ Վրաստան՝ անձնական օգտագործման համար:
Այո, կարող եք: Այդ դեպքում Ընկերությունը կարող է պահանջել մանրածախ պատվերի ձևաթղթեր՝ որպես Ղազախստանի տարածքում արտադրատեսակները հաճախորդներին վաճառելու հաստատում:

8. Ես ապրում եմ Ղազախստանում, իսկ ընկերուհիս՝ Իտալիայում: Արդյոք կարող եմ Իտալիայում ձևակերպել Herbalife-ի արտադրատեսակների առցանց պատվեր՝ առաքելով ընկերուհուս հասցեով՝ իր անձնական օգտագործման համար:
Այո, կարող եք:

9. Ես ապրում եմ Վրաստանում, իսկ ընկերուհիս՝ Իտալիայում: Արդյոք կարող եմ Իտալիայում ձևակերպել Herbalife-ի արտադրատեսակների առցանց պատվեր՝ առաքելով ընկերուհուս հասցեով, որպեսզի նա այդ արտադրատեսակները փոստով ուղարկի ինձ:
Ոչ, չեք կարող: Արտասահմանում անձնական օգտագործման համար ձեռք բերված արտադրատեսակները կարող են բերվել բնակության երկիր միայն անձամբ Անկախ գործընկերոջ կողմից: Երրորդ անձանց, ինչպես նաև սուրհանդակային կամ փոստային ծառայությունների միջոցով առաքումն արգելված է:

10. Ես ապրում եմ Հայաստանում: Արդյոք կարող եմ Թուրքիայում ձևակերպել Herbalife-ի արտադրատեսակների առցանց պատվեր՝ սուրհանդակային ծառայության միջոցով առաքելով իմ հասցեով:
Ոչ, չեք կարող: Արտասահմանում անձնական օգտագործման համար ձեռք բերված արտադրատեսակները կարող են բերվել բնակության երկիր միայն անձամբ Անկախ գործընկերոջ կողմից: Երրորդ անձանց, ինչպես նաև սուրհանդակային կամ փոստային ծառայությունների միջոցով առաքումն արգելված է:

11. Արդյոք կարող եմ այլ երկրում բնակվող իմ հաճախորդին փոստով կամ սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկել իմ երկրում ձեռք բերված արտադրատեսակներ:
Ոչ, չեք կարող: Այլ երկրում բնակվող հաճախորդին արտադրատեսակներով ապահովելու համար կարող եք պատվեր ձևակերպել հաճախորդի բնակության երկրում՝ իր հասցեով առաքումով:

12. Արդյոք կարող եմ իմ հաճախորներին վաճառել այլ երկրներից բերված արտադրատեսակները:
Ոչ, չեք կարող: Herbalife-ի արտադրատեսակները մշակված, արտադրված և հավաստագրված են համաձայն յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը: Անկախ գործընկերները չեն կարող տարածել Herbalife-ի չհավաստագրված արտադրատեսակներ: Կարևոր է հիշել, որ չհավաստագրված արտադրատեսակների տարածումը համարվում է օրենքի խախտում և կարող է վտանգավոր լինել Ընկերության և Herbalife-ի Անկախ գործընկերների համար:

13. Ես ապրում եմ Հայաստանում և պատրաստվում եմ արձակուրդս անցկացնել ԱՄՆ–ում: Արդյոք կարող եմ ԱՄՆ–ում տեղական Վաճառքի կենտրոնում ձեռք բերել արտադրատեսակներ անձնական օգտագործման համար:
Ոչ, չեք կարող: 2017թ. ապրիլի 28-ից ԱՄՆ–ում ոչ ռեզիդենտների համար գործում է պատվերների տեղադրման լիակատար արգելք:

14. Արդյոք կարող եմ լինել ԱՄՆ–ի տարածքում բնակվող Անկախ գործընկերների կամ Արտոնյալ հաճախորդների հովանավոր:
Այո, կարող եք:

15. Ես ապրում եմ Հայաստանում: Արդյոք կարող եմ ԱՄՆ–ում ձևակերպել Herbalife-ի արտադրատեսակների առցանց պատվեր՝ առաքելով հաճախորդի հասցեով ԱՄՆ–ում:
Այո, կարող եք, եթե արտադրատեսակները նախատեսված են հաճախորդի անձնական օգտագործման համար:

16. Արդյոք կարող եմ բիզնես վարել Չինաստանի տարածքում*:
Ոչ, չեք կարող: Չինաստանի քաղաքացի չհանդիսացող անձիք իրավունք չունեն բիզնես վարել Չինաստանի տարածքում: Անկախ գործընկերները չեն կարող նաև Չինաստան ուղարկել կամ անձամբ իրենց հետ բերել Herbalife-ի որևէ արտադրատեսակ, այդ թվում՝ անձնական օգտագործման համար կամ որպես նվեր:

17. Արդյոք կարող եմ Առողջ ապրելակերպի ակումբում այլ երկրից բերված արտադրատեսակով հյուրասիրել իմ հաճախորդներին կամ Անկախ գործընկերներին:
Ոչ, չեք կարող: Անկախ գործընկերները չեն կարող տարածել Herbalife-ի չհավաստագրված արտադրատեսակներ:

18. Արդյոք կարող եմ այլ երկրից բերված արտադրատեսակը նվիրել իմ ընկերներին, հաճախորդներին կամ Անկախ գործընկերներին:
Ոչ, չեք կարող: Անկախ գործընկերները չեն կարող տարածել Herbalife-ի չհավաստագրված արտադրատեսակներ:

19. Արդյոք կարող եմ սոցիալական ցանցի իմ էջում տեղադրել Herbalife-ի՝ այլ երկրից բերված արտադրատեսակ ձեռք բերելու առաջարկ:
Ոչ, չեք կարող: Անկախ գործընկերները չեն կարող տարածել Herbalife-ի չհավաստագրված արտադրատեսակներ:

20. Արդյոք կարող եմ Ընկերության պաշտոնական օգտահաշվից կիսվել արտադրատեսակի լուսանկարով, եթե այն հավաստագրված չէ իմ երկրում:
Այո, կարող եք՝ օգտագործելով «Պատվերի համար տվյալ արտադրատեսակը հասանելի է միայն Ղազախստանում» դիսքլեյմերը:

Herbalife–ի բիզնեսն այն երկրներում, որոնք պաշտոնապես հայտարարված չեն բաց

21. Ես ապրում եմ այնպիսի երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց Herbalife-ի բիզնեսի համար: Արդյոք կարող եմ կնքել Անկախ գործընկերոջ պայմանագիր՝ նշելով բնակության հասցե և գրանցման վայր այդ երկրում:
Ոչ, չեք կարող: Herbalaife-ի բիզնես կարելի է վարել միայն պաշտոնապես բաց երկրներում:

22. Արդյոք կարող եմ անձնական օգտագործման նպատակով Herbalife-ի արտադրատեսակը ինձ հետ բերել այն երկիր, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց Herbalife-ի բիզնեսի համար, օրինակ՝ Թուրքմենստան:
Այո, կարող եք: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ արտադրատեսակը կարող եք բերել միայն անձնական օգտագործման նպատակով, այլ ոչ տարածման կամ վաճառքի համար:

23. Արդյոք կարող եմ լինել այն անձի Հովանավորը, ով ապրում է Herbalife-ի բիզնեսի համար պաշտոնապես բաց չհայտարարված երկրում:
Ոչ, չեք կարող: Անկախ գործընկերները չեն կարող առաջարկել կամ խթանել Herbalife-ի բիզնես-հնարավորությունները այն երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց բիզնեսի համար:

24. Արդյո՞ք կարող եմ Herbalife-ի արտադրատեսակները տարածել այն երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց Herbalife-ի բիզնեսի համար:
Ոչ, չեք կարող: Herbalife-ի բիզնեսի հետ կապված ցանկացած գործունեություն արգելված է այն երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց բիզնեսի համար:

25. Արդյո՞ք կարող եմ գործարար հնարավորությունների հանդիպում անցկացնել այն երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց Herbalife-ի բիզնեսի համար:
Ոչ, չեք կարող: Անկախ գործընկերները չեն կարող առաջարկել կամ խթանել Herbalife-ի բիզնես-հնարավորությունները այն երկրում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց բիզնեսի համար:

26. Արդյո՞ք կարող եմ բացել Առողջ ապրելակերպի ակումբ այն երկրի տարածքում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց Herbalife-ի բիզնեսի համար:
Ոչ, չեք կարող: Herbalife-ի բիզնեսի հետ կապված ցանկացած գործունեություն արգելված է այն երկրի տարածքում, որը պաշտոնապես հայտարարված չէ բաց բիզնեսի համար:

Herbalife-ի բիզնեսի համար փակ տարաքծներ

27.Ո՞ր տարածքներն են ներառվում Herbalife-ի բիզնեսի համար փակ տարածքների ցանկի մեջ:
Կուբա, Իրան, Հյուսիսային Կորեա, Սուդան, Սիրիա, Զիմբաբվե, Ղրիմ: Herbalife-ի հետ կապված ցանկացած գործունեություն արգելված է այդ տարածքներում:

28.Արդյո՞ք կարող եմ անձնական օգտագործման համար արտադրատեսակ բերել այն տարածք, որը փակ է Herbalife-ի բիզնեսի համար (Բիզնեսի համար փակ տարածքների ամբողջական ցանկը կարող եք տեսնել հղումով):
Այո, կարող եք: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ արտադրատեսակը կարող եք բերել միայն անձնական օգտագործման նպատակով, այլ ոչ տարածման կամ վաճառքի համար:

29. Ի՞նչ է իրենից ներկայացնում «OFAC» ցուցակը:
OFAC ցուցակը ԱՄՆ Ֆինանսների նախարարության օտարերկրյա ակտիվների վերահսկման վարչության տնօրինության տակ գտնվող Հատուկ կատեգորիայի քաղաքացիների և արգելված անձանց ցուցակն է: Անկախ գործընկերները չեն կարող որևէ գործունեություն ծավալել այդ ցուցակում ներառված անձանց կամ կազմակերպությունների հետ կամ ցուցակում նշված որևէ մեկի հետ առնչություն ունեցող անձի հետ:

OFAC ցուցակին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով

*Չինաստանում բիզնես վարելու հետ կապված առանձնահատկությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք դիմել Herbalife-ի Տեղեկատվական աջակցության բաժին:

Herbalife